№ 35 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 26 **1894** ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 26 № 35

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԵԿԱՏԵՐԻՆԷ ՅՈՎՍԻՓԵԱՆ ՊՕՂՈՍԵԱՆՑ և ՎԱԽՏԱՆԴ ու ԲԱԳՐԱՏ ՅՈՎՍԻՓԵԱՆ ԴՕԼՄԱԶԵԱՆՑՆԵՐԸ, *ցաւօք սրտի յայտնելով—առաջինը իր անմոռանալի ամուսնու, իսկ վերջինները իրանց սիրելի փեսայի, Թիֆլիսի վաճառական*

ԱՐՏԵՄ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՊՕՂՈՍԵԱՆՑԻ

մահը, խոնարհաբար խնդրում են բոլոր բարեկամներին և ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեանը, որ լինելու է կիրակի, ամսիս 27-ին, առաւօտեան $10^1/_2$ ժամին, իր բնակարանից ս. Սարգիս եկեղեցու մօտ, տուն Գօլմազեանցի, № 17, դէպի ս. Սարգիս եկեղեցին։ Ամբիծքը կը լինի ամսիս 26-ին, շաբաթ երեկոյեան $6^1/_2$ ժամին։

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ծրագիրներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Այսօրվայ ժողովի առիթով. Նամակ Դարաչիչագից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բրօուն-Սեկար. Տեղեկութիւններ Թիւրքաց Հայաստանից. Կրկին մի քանի խօսք կօշտաի մասին. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պրօֆէսօր Ներսէսեան. Ներսէսեան.

ԾՐԱԳԻՐՆԵՐ

—

Հասարակական կեանքը կամաց-կամաց փոփոխութիւնների է ենթարկվում, որոնց համեմատ երևան են գալիս նոր խնդիրներ, և պէտք է զգացվում վերաքննել այն յարաբերութիւնները, որոնք գոյութիւն ունեն հասարակութեան մէջ։

Եւ մեզանում տարիների ընթացքում կիսվել են խնդիրներ, որոնք սպասում են իրանց միակութեան և լուծման, իսկ նրանցից մի քանիսը նոյն իսկ անյետաձգելի են այն պատճառով, որ ժողովուրդը նրանց վերաբերութեամբ գարձել է խիստ պահանջող, նոյն իսկ բծախնդիր։

Մեր հասարակական կեանքի մի քանի գործառնութիւնների վերաբերմամբ թէև մինչև այժմ էլ կային կանոններ, կանոնադրութիւններ, բայց նրանց գործադրութիւնը խնդիր չէր գարձել ժողովրդի համար, որովհետև ժողովուրդը անտարբեր էր դէպի նրանց։ Եթէ հոգաբարձական ընտրողական ժողովը կանոնաւոր չէր լինում, ոչ ոք չէր բողոքում գրա դէմ։ Եթէ եկեղեցական պատգամաւորական ընտրութիւնների ժամանակ չէր ժողովվում ընտրողների օրինական թիւը, այդտեղ ոչ ոք զանցառութիւն կամ անկանոնութիւն չէր նկատում։ Եթէ մի տեղ տեսուչը և ուսուցչական խումբը իրապէս իրանց ձեռքն էին առնում դպրոցական բոլոր գործերը և մանում էին հոգաբարձուների իրաւասութեան սահմանների մէջ, իսկ մէս տեղ ընդհակառակը՝ հոգաբարձուներն էին իրապէս կառավարում ամբողջ դպրոցը և ազդում էին մանկավարժական գործերի վրա, —այդ հանգամանքներից կամ խնդիր չէր ծագում, կամ այնքան աննշան, որ տեղն ու տեղը նա մի կերպ լուծվում էր, առանց մեծ յուզմունքների։ — Հասարակութիւնը անտարբեր էր դէպի անձնաւորութիւնները և կեանքի երևոյթները։ Նա գոհ էր, երբ տեսնում էր, որ կան գոնէ անձնաւորութիւններ, որոնք յանձն են առնում զբաղվել եկեղեցու, դպրոցի, և ընտրութիւններին վերաբերեալ գործերով։

Ընդհանրապէս խօսելով, այդ անտարբերութիւնը այժմ էս չէ անցել և երևի շուտով էլ չի անցնի, բայց առանձին-առանձին երևոյթներ և խնդիրներ, ժամանակից հանգամանքների շնորհով, գարթել են հասարակութեան առանձին ուշադրութեան առարկայ։ Եւ գործերի հետ աւելի մօտ շփվելու առաջին փորձերը ցոյց են տալիս, որ եղած կարգերի մէջ բացատրութեան և պարզաբանութեան կարօտ շատ վիճելի կէտեր կան։

Այդ տեսակէտից շատ ցանկալի է, որ հասարակական կեանքի առաջադրած խնդիրները և յարաբերութիւնները որոշող կանոնները օր առաջ քննութեան և ուսումնասիրութեան ենթարկվին։ Բայց մի և նոյն ժամանակ անհրաժեշտ է, որ այդ քննութիւնը կատարվի ամենալուրջ և բազմակողմանի կերպով ու հասարակութեան գանազան շրջանների մասնակցութեամբ։

Շատ ուրախալի երևոյթ էր այդ կողմից էջմիածնի ուսումնարանական յանձնաժողովի դիմումը բոլոր թեմական տեսուչներին և դպրոցական մարմիններին՝ խնդրելով դրանց կարծիքները և գործնական դիտողութիւնները դպրոցական գանազան խնդիրների և երևոյթների վերաբերմամբ։

Նոյն վերաբերմունքը պէտք է հիմք ծառայի և մեր եկեղեցական պատգամաւորական ընտրութիւնների կանոնադրութեան, թեմական դպրոցների և այլ հաստատութիւնների գործավարութեան ծրագիրների մշակութեան համար։ Որչափ մեծ լինի ժողովրդի մասնակցութիւնը այս տեսակ ծրագիրների քննութեան ժամանակ, այնքան այդ ծրագիրները մշակված կը լինեն բաւարար կերպով և ազատ կը լինեն միակողմանիութիւնից և սխալներից։ Ժողովրդի այդ մասնակցութիւնը մանաւանդ կարևոր է այն խնդիրներում, որոնք անմիջական կապ ունեն ժողովրդի ընտրողական շահերի հետ և որտեղ այսօրվայ ընդունված մի ծրագիր, հաստատված մի կանոն կարող է աննկատելի կերպով արգելել ժողովուրդին՝ գործադրելու իր ընտրողական իրաւունքները ուրիշ դէպքերում։ Սխալներ չանելու համար անհրաժեշտ է, որ վերջնական վճիռներ կայացնելուց առաջ խնդիրները ենթարկված լինեն ամենամանրամասն և լուրջ հետազօտութեան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐՎԱՑ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

—

Այսօր, մարտի 26-ին, քաղաքային դումայի դահլիճում կայանալու է Հրատարակչական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողով։ Օգուտ ենք քաղում առիթից մի քանի խօսք ասելու այդ համակրելի հիմնարկութեան գործունէութեան մասին։

Երկար տարիներ անգործունէութեան մատնվելուց, և մի քանի տարի տատանման վիճակի մէջ մնալուց յետոյ, այդ ընկերութիւնը վերջին տարիներս սկսել է եռանդով գործել։ Այդ խօստովանում են նոյն իսկ հակառակորդները։ Բաւական է մի քանի թիւեր բերել ընկերութեան տեղեկագրից, որ այս բօպէիս դրած է մեր առաջ, և ամենքը կը համոզվեն դրա մէջ։

Օրինակ, 1887 թ-ին, երբ ընկերութիւնը գըտնվում էր «ազգային գործերի կապալառուների» ձեռքում, ունէր 14 անդամ, իսկ 1891 թ-ին՝ 111 անդամ, և ապա 1893 թ-ին՝ 303 անդամ։ 1886 և 1887 թ-երին ընկերութիւնը հրատարակել է տարեկան մի մի գիրք, իսկ 1891 թ-ին՝ 16 գիրք, 1892 թ-ին՝ 18 գիրք, 1893 թ-ին՝ 12 գիրք։ 1887 թ-ին ընկերութեան մուտքը եղել է՝ 206 րուբլի, իսկ 1892 թ-ին՝ մուտք եղել է 5473 րուբլի, 1893 թ-ին՝ 5156 րուբլի։

Այդ թիւերը արդէն պերճախօս ապացոյց են, թէ ինչպէս այդ հիմնարկութիւնը, որ անգործ, ամեն լաւ բան ապառնդ ձեռքերում հասել էր յետին անկման, միանգամից կենդանացաւ, գրաւեց հասարակութեան ուշադրութիւնը, և սկսեց գործ կատարել։

Սակայն կայ մի խնդիր, որի մասին մենք այսօր ուզում ենք մի քանի խօսք ասել,—դա այն է, թէ որքան ընկերութեան հրատարակութիւնները *մատչելի* են մեր ժողովրդի ընթերցանութեան համար, և որքան են նրանք տարածվում այդ նոյն ժողովրդի մէջ։ Շատ ցաւում ենք, որ մեր յօդուածի չրջանակները թոյլ չեն տալիս առանձին-առանձին փաստեր առաջ բերել և թիւերով խօսել, ուստի մենք կը բաւականանանք մի քանի ընդհանուր գծերով։

Կասկած չը կայ, որ ընդհանրապէս ընկերութեան այժմեան հրատարակութիւնները, համեմատելով առաջվան հրատարակութիւնների հետ, անհամեմատ աւելի լաւ են, և աւելի մատչելի ժողովրդին։ Առաջ ընկերութիւնը իր միջոցների մեծ մասը գործադրում էր զանազան «Աստղիկների» «Ագաթանգեղոսների» և «Վանդ Պատմագիրների» վրա, իսկ այժմ, դրա փոխարէն հրատարակվում են բնագիտական, վիպագրական և բարոյագիտական այնպիսի աշխատութիւններ, որոնք սերտ կապ ունեն ժողովրդի առօրեայ պահանջների և հասարակական հետաքրքրութեան հետ, և որոնք ոչ միայն ընթերցանութեան լաւ նիւթ են, այլ և նպաստող ընթերցանութեան տարածման։

Այդ կողմից նախկին և վերջին հրատարակութիւնների մէջ ահագին տարբերութիւն կայ։ Մենք միայն մի պակասութիւն ենք նկատում այս վերջին տարիների հրատարակութիւններից մի մասի մէջ.—դա այն է, որ այդ գրքերը, թէև բովանդակութեամբ վերին աստիճանի համակրելի և օգտաւէտ, բայց իրանց ծաւալով, իրանց գրական ձևով *մատչելի* չեն մեր այժմեան ընթերցող ժողովրդի մտաւոր պատրաստութեանը, և հէնց այդ է պատճառը, որ այդ ինքն ըստ ինքեան լաւ և օգտաւէտ գրքերը չեն տարածվում, այլ մեծ մասամբ մնում են գարսված ընկերութեան պահեստի մէջ։

Բաւական չէ, մեր կարծիքով, հրատարակել այնպիսի գրքեր, որոնք ինքն ըստ ինքեան լաւ են, կամ օտար գրականութեան մէջ՝ ուրիշ պայմաններում, մեծ քանակութեամբ տարածվում են, այլ պէտք է ի նկատի ունենալ, թէ այդ համակ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՕՖԷՍՕՐ ՆԵՐՍԷՍ ՆԵՐՍԷՍԵԱՆ

—

Մարտի 14-ին, երկարատև հիւանդութիւնից յետոյ, 46 տարեկան հասակում վախճանվեց Մօսկվայի համալսարանի պրօֆէսօր Ներսէս Ներսէսեան։ Հայ գիտնականի այդ վաղաժամ մահը խորին տխրութիւն պատճառեց թէ հայ հասարակութեանը, թէ հայ ու ռուս ուսանողներին և թէ հանգուցեալի պաշտօնակից-ընկեր պրօֆէսորներին։ Գեռ ամիսներ առաջ շատ անմխիթարական լուրեր էին պատում հասարակութեան մէջ հանգուցեալի տարօրինակ հիւանդութեան մասին, մի հիւանդութիւն, որ ականաւոր բժիշկների համար անգամ երկար ժամանակ անբացատրելի մնալով՝ օրից օր ոտի վրա հալ ու մաշ էր անում յարգելի գիտնականին և քայլ առ քայլ մօտեցնում էր նրան դէպի գերեզմանի դուռը։ Նրա այդ տխուր վախճանը, իրաւ է, ամենքիս համար էլ այնքան անսպասելի չէր, բայց էլի ոչ ոք չէր կարող հաշտվել այն մտքի հետ, որ այդպէս չուտով գերեզման կիջնի Մօսկվայի հայ հասարակութեան ամենից ակնկալած ուսուցիչ-բարեկամը, համալսարանում սիրված ու յարգված՝ գիտութեան տաղանդաւոր մշակը։

Պրօֆէսօր Ներսէսեան ծնվել է 1848 թ-ին Շուշի քաղաքում։ Մանուկ հասակից նա արդէն աչքի ընկնելիս է եղել իր բնատուր ընդունակութիւններով, իր սուր, հարցասէր խելք ու մտքով։ Ծնողները նրան տալիս են Թիֆլիսի 1-ին գիմնազիան, ուր ամենառաջադէմ աշակերտը հանդիսանալով և ոսկէ մէդալով աւարտելով գիմնազիան՝ 1867 թ. նա իբրև Կովկասի *ստիպենդիատ* մտնում է Մօսկվայի համալսարանը։ Իրան մասնագիտութիւն ընտրելով իրաւաբանական ճիւղը, Ներսէսեան այստեղ էլ ցոյց է տալիս իր արտակարգ հարուստ ընդունակութիւնները, և միանգամայն գրաւելով իր պրօֆէսօրների ուշադրութիւնը՝ նրանց սիրելի և համակրելի ուսանողն է դառնում։ Փայլուն կերպով աւարտելով և համալսարանը՝ նրան 1871 թ., չնորհիւ իր աչքի ընկնող տաղանդի, ամենայն սիրով թողնում են նոյն համալսարանում, որպէս զի պատրաստվի քաղաքական իրաւագիտութեան ամբիոնը ստանձնելու։

Այդպէս, երիտասարդ Ներսէսեան, գիտնական ասպարէզն ընտրելով իր գործունէութեան համար, 1878 թ. իր գրած «Понятіе добровольнаго представительства въ гражданскомъ правѣ» դիսերտացիայով ստանում է մագիստրոսի կոչումը, իսկ 1889 թ. լոյս ընծայած «О бумагахъ на предъявителя» աշխատութեամբ արդէն առևտրական իրաւագիտութեան դոկտոր է դառնում։

Պրօֆէսօր Ներսէսեանի մահը մեծ կորուստ է Մօսկվայի հայ հասարակութեան համար, որի մէջ նա ապրում էր և որի եռանդուն, ամենառաջադէմ ու ինտելիգենտ անդամներից մինն էր։ Այդ կորուստը զգալի է մանաւանդ նրա համար, որ տաղանդաւոր գիտնականն այնպէս բարձր կանգնած լինելով մի այլ լուսաւոր հասարակութեան աչքում, այնպիսի անուն ու համբաւ վաստակած լինելով օտարների մէջ—նա հոգով միշտ կապված էր Մօսկվայի հայ հասարակութեան չահերի հետ, ապրում ու սրտանց հետաքրքրվում էր այդ հասարակութեան կեանքով, արձագանք էր տալիս նրա հոգսերին ու կարիքներին։ Մի կողմից ծանրաբեռնված իր բազմանդամ ընտանիքի ապրուստի հոգածողութեամբ, միւս կողմից՝ իր պաշտօնական զբաղմունքներով—նա այնուամենայնիւ միշտ ժամանակ էր գտնում և պատրաստ էր ամենայն սիրով ու եռանդով սպասաւորելու Մօսկվայի հայ կոլօնիային ամեն մի հասարական խնդրում, ամեն մի ընդհանուր հարցում։ Եւ իրաւ, չէ եղած մի հասարական գործ, մի խնդիր, որին մասնակցած չը լինի հանգուցեալը։ Մերթ գործող անդամ, մերթ խորհրդատու, մերթ հաշտութիւն սերմանող, մերթ ինքն ղեկավարող և առաջնորդող՝ նա միշտ հանդէս է եկել ժողովրդի մէջ և իր հեղինակութեամբ յայտնի դեր է կատարել այս և այն յուզումների ժամանակ, այս և այն հասարական կեանքին յատուկ բանակռիւներ և գժտութիւններ ծագելիս։ Եւ միշտ էլ հանգուցեալը, բանաստեղծի ասած, «ճշմարտութեան կողմն է համբուրել», միշտ էլ ընդհանրութեան, ժողովրդի չահերն ու իրաւունքներն է պաշտպանել՝ զինվելով կամայականութեան, ազայութեան, ժողովրդի օգուտն ու իրաւունքն իրանց կապրիճներին ծառայեցնողների ըմբոստութեան դէմ...

Սակայն նախ քան զինվելը, նախ քան մարքառելը նա միշտ աշխատում էր սէր, համերաշխութիւն, հաչտութիւն քարոզել ժողովրդի մէջ, սանձել մէկի յամառութիւնը, մեղմել միւսի կիր-

Ա. Ծ.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՀԱԶԻԶ

Ծ. Ա.

Շահազիզ Հովհաննես Ալեքսանդրի, ծն. 1893 թ., Ալեքսանդրապոլ, հայ, ուսանող Ալեքսանդրապոլի ուսուցչական ինստիտուտում, ապրում է Ալեքսանդրապոլ, Ռուսական փող., տուն Ղազարյանի։ Ձերբակալվել է 1913 թ. հունվարի 17-ին։

Մեղադրվում է նրանում, որ 1913 թ. հունվարի 3-ին Ալեքսանդրապոլի ուսուցչական ինստիտուտի ուսանողների ժողովում հանդես գալով ընդդեմ ինստիտուտի ներքին կարգերի, ինչպես նաև ընդդեմ ինստիտուտի տնօրինության, ուսանողների մեջ տարաձայնություններ է հրահրել։

Ա. Ա.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

Ա. Ա.

Սարգսյան Հովհաննես Ալեքսանդրի, ծն. 1893 թ., Ալեքսանդրապոլ, հայ, ուսանող Ալեքսանդրապոլի ուսուցչական ինստիտուտում, ապրում է Ալեքսանդրապոլ, Ռուսական փող., տուն Ղազարյանի։ Ձերբակալվել է 1913 թ. հունվարի 17-ին։

Մեղադրվում է նրանում, որ 1913 թ. հունվարի 3-ին ուսանողների ժողովում հանդես գալով ընդդեմ ինստիտուտի ներքին կարգերի, ինչպես նաև ընդդեմ ինստիտուտի տնօրինության, ուսանողների մեջ տարաձայնություններ է հրահրել։

Ա. Ա.

ՍՏԵՓԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Ա. Ա.

Սարգսյան Ստեփան Ալեքսանդրի, ծն. 1893 թ., Ալեքսանդրապոլ, հայ, ուսանող Ալեքսանդրապոլի ուսուցչական ինստիտուտում, ապրում է Ալեքսանդրապոլ, Ռուսական փող., տուն Ղազարյանի։ Ձերբակալվել է 1913 թ. հունվարի 17-ին։

Մեղադրվում է նրանում, որ 1913 թ. հունվարի 3-ին ուսանողների ժողովում հանդես գալով ընդդեմ ինստիտուտի ներքին կարգերի, ինչպես նաև ընդդեմ ինստիտուտի տնօրինության, ուսանողների մեջ տարաձայնություններ է հրահրել։

Ա. Ա.

ՍՏԵՓԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Ա. Ա.

Սարգսյան Ստեփան Ալեքսանդրի, ծն. 1893 թ., Ալեքսանդրապոլ, հայ, ուսանող Ալեքսանդրապոլի ուսուցչական ինստիտուտում, ապրում է Ալեքսանդրապոլ, Ռուսական փող., տուն Ղազարյանի։ Ձերբակալվել է 1913 թ. հունվարի 17-ին։

Մեղադրվում է նրանում, որ 1913 թ. հունվարի 3-ին ուսանողների ժողովում հանդես գալով ընդդեմ ինստիտուտի ներքին կարգերի, ինչպես նաև ընդդեմ ինստիտուտի տնօրինության, ուսանողների մեջ տարաձայնություններ է հրահրել։

Ա. Ա.

ՍՏԵՓԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Ա. Ա.

Սարգսյան Ստեփան Ալեքսանդրի, ծն. 1893 թ., Ալեքսանդրապոլ, հայ, ուսանող Ալեքսանդրապոլի ուսուցչական ինստիտուտում, ապրում է Ալեքսանդրապոլ, Ռուսական փող., տուն Ղազարյանի։ Ձերբակալվել է 1913 թ. հունվարի 17-ին։

Մեղադրվում է նրանում, որ 1913 թ. հունվարի 3-ին ուսանողների ժողովում հանդես գալով ընդդեմ ինստիտուտի ներքին կարգերի, ինչպես նաև ընդդեմ ինստիտուտի տնօրինության, ուսանողների մեջ տարաձայնություններ է հրահրել։

Ա. Ա.

ԳՎԱՓՎՍՈՑ ԳՎԱՔՈՏՅՈ

ԵՒՈՒԻՆ-ՆԿԱՐ

— Բիրժա-Նկարի 1818 թվի ս. Ծաղիկ հին կղզի 20 տարի պոիտ հասարակաց պոիտ է եվ պետք չունի ոչ մի պաշտպանության, որ ունի ոստիկան եվ ժանդարմ։

Բիրժա-Նկարի ծովեզերքի ու հին բերդի պոիտ պետք է ունենայ մեծ նշանակություն առևտրական տեսակետից, որովհետև այդ տեղից ամեն տարի ուղարկվում է մոտ 1840 թվի գարնան ամսում դուրս եկած նավերի թվում էր նաև մի հունական առևտրական նավ, որի վրա կային մոտ 20 հոգի մարդիկ, որոնք ոչ մի լեզու չգիտեին, բացի հունարենից։ Նավապետը հայտնեց, որ նավը պատկանում է Սիրոս կղզու մի հույն առևտրականի, որի անունը նա չգիտեր։ Նավապետը ասում էր, որ նավը գնում է Ալեքսանդրիա, բայց ինչ բեռ ունի, չգիտեր։ Ես ուզում էի իմանալ, թե ինչ բեռ կարող է լինել այդ նավի վրա, որ նավապետը չգիտե, որ նավապետը ասում է

որոնք վերջացան արիւնահեղ ընդհարումներով ժողովրդի և կառավարչական զօրքերի մէջ։ Վառօդներով են նկարագրում լրագիրները պատգամաւորների ժողովի առաջ տեղի ունեցած ցոյցը՝ ոգևորված աղաղակներով, կոպիտ հանդայնքներով և չյառաջ մադիարներ երգով»։

ԽԱՌՆ ԼՈՒԻՐԵՐ

Գիտնական նոր հետազօտութիւններից երևում է, որ անտառներն ունեն մաքրող նշանակութիւն, որ նրանց միջով անցնող քամին դուրս է գալիս անտառից բոլորովին ազատ այն բակտերիաներից, որ գտնվում են նրա մէջ։

***

Տեխնիական և արհեստագիտական կրթութեան երկրորդ ժողովը կը կայանայ Մօսկվայում 1895 թւի վերջում։ Ինչպէս յայտնի է, առաջին ժողովը եղաւ 1889 թւի վերջը Պետերբուրգում և ունեցաւ չատ օգտաւէտ հետևանքներ, պարզելով արհեստագիտական կրթութեան կարիքները և պահանջները։

***

Բժիշկ Վերենիուսը Պետերբուրգում կարդացած իր մի զեկուցման մէջ մեծ համակրանքով է խօսում այն երևոյթի մասին, որ արտասահմանում մանկավարժական հաստատութիւնները սկսում են բժիշկներ հրաւիրել իրանց ժողովներին, ինչպէս օրինակ, Բերլինի 1890 թւի դպրոցական կօնֆերենցիան հրաւիրել էր Հելմհօլց և Վիրխով պրօֆէսօրներին իր նիստերին։ Զեկուցանողը առաջարկում է, որ նոյնը կատարվի և Ռուսաստանում և դպրոցական կեանքի մէջ վաղուց զգացած առողջապահական կարիքները նկատողութեան առնվեն և լուրջ կերպով դարմանվեն։

***

Արտատպելով «Մշակից» Ներսիսեան դպրոցի կանոնադրութիւնը փոփոխելու համար կազմած յանձնաժողովի լուրը, «Արձագանքը» աւելացնում է,—«ցաւում ենք, որ այդ լուրը միանգամայն անճիշդ է»։

Իսկ մենք կը պատասխանենք. «Շատ ուրախ ենք, որ այդ լուրը անճիշդ է»։ Եւ գիտէք թէ ինչու.—որովհետև մենք լաւ բան չենք սպասում մի այդպիսի յանձնաժողովից։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 մարտի։ Պետական կալուածների մինիստրութեան կերպարանափոխութիւնից յետոյ, գաղտնի խորհրդական Երմոլով երկրագործութեան և պետական կալուածների մինիստր է նշանակված։ — Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը յայտարարում է, որ սեպտեմբերի 3-ից մինչև 12-ը ժընէվում կը կայանայ արևելագէտների 10-դ միջազգային կօնգրէսը։

ԼՕՆԴՕՆ, 23 մարտի։ Համայնքների ժողովը 180 ձայների մեծամասնութեամբ 170-ի դէմ ընդունեց Դալցիէլի առաջարկութիւնը՝ Շօտլանդիայում օրէնսդրական ժողով հիմնելու մասին, բացառապէս չօտլանդական գործերի համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մարտի։ Պետական կալուածների մինիստրութեան կից խորհրդակցութիւն է կազմվում չերամապահութիւնը բարւոքելու համար։ Նախագծվում է հիմնել Թուրքէստանում մի առանձին վարչութիւն՝ գիւղատնտեսութեան վերաբերեալ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մարտի։ Ամենաողորմածաբար թոյլ է տրված ֆինանսների մինիստր Վիտէին ընդունել և կրել գերմանական կայսրի չնորհած «կարմիր արծուի» մեծ խաչը։

ՊԱՐԻԶ, 24 մարտի։ Այսօր երեկոյեան Ֆայօ հիւրանոցում, սենատ հանդէպ, պայթեց մի ռումբ, որը գրված էր հիւրանոցի պատուհանի առաջ։ Պայթիւնը չատ զօրեղ էր. ապակիները չարդուփշուր են եղած։ Մի տղայ տեսել է, թէ ինչպէս մի 30 տարեկան տղամարդ, բանւորի պէս հագնված, ռումբը դրեց Ֆայօ հիւրանոցի պատուհանի առաջ գրված ծաղիկների արկղի մէջ և փախաւ։ Ռումբի պայթիւնի ժամանակ վիրաւորվեցին ազգայնականական գրող Տալիադ, որը գովաբանում էր անարխիզմը, Տօմազօ ծառան և էքսկինգ անունով աղջիկը. մնացածները թեթև կերպով վիրաւորվեցին. վիրաւորվածներից ոչոքի կեանքին վտանգ չէ սպառնում։ Պայթիւն առաջ բերողին ոչ ոք չէ ճանաչում։ Երկու հոգու կալանաւորեցին, բայց արձակեցին նրանց։ Գործիքի յատկութիւնը դեռ ևս որոշված չէ. այսօր առաւօտ քննութիւնը կը չարունակվի։ Լրագիրները միաձայն պախարակում են այդ յանցաւոր փորձը։

ԼՕՆԴՕՆ, 24 մարտի։ Երէկ երեկոյեան Լօնդօնի պօլիցիան կալանաւորեց Ֆրանսիացի Մէնիէ անարխիստին — Բավաշօլի ընկերոջը և Վէրի կաֆէում 1892 թւին պայթիւն առաջացնողին։ Մէնիէին կալանաւորեցին կայարանում, երբ պատրաստվում էր անուէրպէլն ճանապարհ ընկնել։ Նրա մօտ գտան մի լցրած ատրճանակ և մի քանի փամփուշտներ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(կուկիա, վօրօնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւնների։

Կ. Գ. ՋԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.

Դ. Դ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխաների և կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—$11\frac{1}{2}$—$12\frac{1}{2}$ ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—$12\frac{1}{2}$—1 ժ. կանանց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1\frac{1}{2}$ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—$7\frac{1}{2}$ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—$7\frac{1}{2}$ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կօնսիլիումի) դ օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕՐԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ
ուր միշտապէս ապրում են երկու բժիշկ
ԴԵՂԱՏՈՒՆԸ
տրվում է ԱՐԵՆԴՈՎ։ *Դիմել՝* Эривань, Акопьянцъ.
(№ 20) 9—10

ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒԻՐՆԵՐ



ՖԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ՝ ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՑՏԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՑՆԱԽԱՉԵՐ, ԼԱՐԵՐ ԵԻ ԱՑԼՆ, ԵԻ ԱՑԼՆ։

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։

ՆՈՐ-ՊՐԷՑՍԿՈՒՐԱՆՏՆ
ուղարկվում է ձրի։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵԻ ՁԱՑՆԱԽԱՉԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ

ԴԷՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
Մատակարար կայսերական երաժշտական Ընկերութեան
Тифлисъ, Музыкальное депо Б. М. Мириманіана, Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.
(№ 35 10, 25) 1—20

Կիրակի, մարտի 27-ին, դէյստվիտելնի ստատսկի սօվէտնիկ
ՍՏԵՓԱՆ ՊԱՎԼՕՎԻՉ ՂԱՄԲԱՐԵԱՆՑԻ
մահվան տարեդարձի օրը, Քամոյեանց ս. Գէորգ եկեղեցում պատարագից յետոյ կը կատարվի հոգեհանգիստ։ 1—1

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
ՏԷՐ—ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է երթևեկ, կիսաօրեայ և թոշակաւոր աշակերտներ։ Գտնվում է կլասիքական գիմնազիայի, րէալական ուսումնարանի, կադէտների կօրպուսի և այլ միջնակարգ ուսումնարանների համար։

Թիֆլիս, Գանօվսկայա փողոց, № 11, սեփական տուն։
(№ 35) (եր. և չ.) 1—25

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ *ապրիլ ամսի 6-ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է ճաշուրդ (առանց կրկնաճաշուրդի) կապելով տալու Աւետիք Փիրոյեանցից դպրոցին ընծայած կալուածքը, որը գտնվում է Սօլդատսկի փողոցում ընդ № 16 և 11։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10-ից 12 ժամը։* (№ 35) 1—3

ԿԱԽԷԹԻԱՑԻ ԱՅԳԵՏԷՐԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ սոյն մարտի 25-ից բացված է երրորդ բաժանունք գօլօվինսկի պրօսպէկտի վրա, Ն. Դ. Զուբալովի տան մէջ, քաղաքային ապահէկայի կողքին, ուր կը կատարվի բացառապէս շիշերով վաճառումը։

Իսկ պահեստներում և մագազիններում, որ գտնվում են՝

1) *Երևանեան հրապարակի վրա, թամամշէվների քարվանսարայում և*

2) *Միխայլօվսկայա փողոցի վրա, Սլիվիցկու տան մէջ № 81, կատարվում է թէ շիշերով և թէ մեծ քանակութեամբ գինիների վաճառումն. Ընկերութիւնը խնդրում է լուրջ ուշադրութիւն դարձնել էտիկէտի և բանդերօլի վրա։* (№ 35) 1—3

Թիֆլիսի ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութիւնը յայտնում է, որ Ընկերութեան կանոնադրութեան § 31 համաձայն, ամսոյս 26-ին, շաբաթ օր, երեկոյեան ժամի 8-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում նշանակված է ընդհանուր ժողով։

Պարապմունքի առարկաներն են՝

ա) Տեղեկագրի, հաշւի և նախահաշւի ընդունումը և հաստատումը.

բ) Գաւառները գրքեր ուղարկելու համար կրեդիտի աւելացնելը.

գ) Պաշտօնական անձերի ընտրութիւնը. վարչութեան գանձապահի, քարտուղարի, մի անդամի, և խմբագրական մանաժողովի չորս անդամների։

Ընկերութեան 1893 թ. տեղեկագիրը ստանալ յանկացողները թող բարեհաճեն դիմել ընկերութեան գրասենեակը—Բարիաթինսկայա փողոց, տուն Գեղեվանօվայի։
2—2

Ի. ԵԱ. ԲՐՕՆ ՖՕՆ ԲՐԵՆՆԷՐ

Ցանձն է առնում ՀԱՇԻՊԱՀԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ և ԱՒԻԵՏՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆՆԵՐ պահելու գործը ամբողջ տարվայ ընթացքում, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, հայերէն և ուրիշ լեզուներով. ստուգում է զանազան առևտրական և արդիւնաբերական հաստատութիւնների հաշիւները և մատեանները, քննում, փակում, բանում, և կազմում է առևտրական մատեաններ. ընդունում է առևտրական մատեանների զանազան թիւրիմացութիւնների քննութիւնը և բացատրութիւնը։

Այն անձինք, որոնք չունեն հաշւապահներ, բայց ցանկանում են ունենալ կանոնաւոր հաշւապահութիւն, կարող են ունենալ ՁԻՇԴ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱՆՑ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ԵԻ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՄԱՏԵԱՆՆԵՐ։ Մատեաններ պահելու համար վերցվում է տարեկան 100 րուբլի և աւելի։ Հասցէն Елизаветинская, № 25, *ոտիկանական վարչութեան վերին յարկում։*

Ուսուցանում է՝

ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵԻ ԱՐԱԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Վճար՝ *Հաշւապահութեան ամբողջ կուրսի համար (2—3 ամիս)* 40 ՐՈՒԲԼԻ
Արագագրութեան տեսական կուրսի համար (2 ամիս) 50 ՐՈՒԲԼԻ

Պարապմունքներ լինում են ամեն օր, երկու ժամվայ ընթացքում։ Առաջադէմ պարապմունքների համար ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ իւալական դպրոցի դիրէկտորից և ուրիշ անձերից։
(№ 16) (չ) 7—100

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ

(Առանց սակարկութեան)

Եղբ. Գուլասպօվների մագազինում և պահեստում, Դվօրցովայա փողոցի վրա, կալուածական Բանկի տան մէջ և Սարաջևի ու Ծովիանօվի տան մէջ, „բակում“։

Զանազան ապրանքներ։ կանանց և երեխաների կաստօրի և յարդէ գլխարկներ 30 կօպէկից մինչև 1 ր., տղամարդկանց կաստօրի գլխարկներ 1 ր. 25 կօպէկից սկսած և աւելի թանգ, վուալներ 20 կօպէկով, կրուժևնաներ, ժապաւէններ, ծաղիկներ, զգեստների և գլխարկների համար զուգեր՝ արշինը 20 կօպէկով և աւելի թանգ, անձրևակալներ, հովանոցներ և ձեռնոցներ 20 կօպէկից, ժերսէ 1 րուբլուց սկսած և աւելի թանգ։ Եւ նոյնպէս մեծ ընտրութիւն մոդային և գալանտերէյնի ուրիշ ապրանքների էժան գներով, որի մէջ պատւելի հասարակութիւնը կը համոզվի՝ այցելելով մեր վաճառումն։

(№ 12) *Ցարգանքով* ԵՂԲ. ԳՈՒԼԱՍՊՕՎՆԵՐ 23—30

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Марта 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 6аз.